



Մամուլի հաղորդագրություն

29.06.2020թ.

«Էյչ-Էս-Բի-Սի» Խմբի և «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի կողմից իրականացվող համատեղ ծրագրի շրջանակներում հատկացվել է 149 հազար ԱՄՆ դոլար՝ մարզերում նոր աշխատատեղեր ստեղծելու նպատակով:

Ս.թ. հունիսի 26-ին հեռավար եղանակով պաշտոնապես մեկնարկեց «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի կողմից իրականացվող և «Էյչ-Էս-Բի-Սի» Խմբի կողմից ֆինանսավորվող «Գործազուրկ բնակչության շրջանում ՏՏ և ձեռնարկատիրական հմտությունների բարելավում ՀՀ մարզերի տնտեսական զարգացումը խթանելու նպատակով» ծրագիրը: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 149 հազար ԱՄՆ դոլար, որից 105,5 հազար ԱՄՆ դոլարը տրամադրել է «Էյչ-Էս-Բի-Սի» Խումբը:

Ծրագրի նպատակն է ՀՀ մարզերի բնակիչների համար ստեղծել աշխատանքի բացառիկ հնարավորություն՝ խթանելով տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի և ձեռներեցության զարգացումը Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում:

Ծրագիրն իրականացվում է երկու բաղադրիչներով: **Առաջին բաղադրիչի** շրջանակում 60 մարզաբնակ երիտասարդներ կմասնակցեն Ինստիգեյթ ուսումնական կենտրոնի և մարզերում գործունեություն ծավալող շահագրգիռ ՏՏ ընկերությունների ավագ մասնագետների կողմից անցկացվող ՏՏ գծով վեցամսյա դասընթացների, որոնց կհաջորդի երկամսյա աշխատանքային պրակտիկա այդ ընկերությունների մարզային մասնաճյուղերում: **Երկրորդ բաղադրիչը** նախատեսում է մարզաբնակ 40 երիտասարդների համար ձեռնարկատիրական հմտությունների զարգացման և բիզնես պլանավորման գործնական դասընթացների կազմակերպում, որը վերջիններիս կընձեռի սեփական բիզնես սկսելու և զարգացնելու հնարավորություն:

Միջոցառման ընթացքում ելույթի խոսքով հանդես եկան «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի, «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության» և այլ գործընկեր կազմակերպությունների ղեկավարները:

«Մենք HSBC-ում քաջ գիտակցում ենք, որ երկրի տնտեսական զարգացումը անհնարին է պատկերացնել առանց համայնքների տնտեսական զարգացման: Ծրագրի շրջանակներում 100 մարզաբնակ երիտասարդների կընձեռվի ՏՏ և ձեռներեցության ոլորտներում գիտելիքներ ձեռք բերելու և դրանք իրենց հարազատ համայնքներում կիրառելու հնարավորություն: Սա

մեծ քայլ է թիրախային մարզերում գործազրկության նվազեցման և համայնքների երկարատև տնտեսական զարգացման ապահովման ուղղությամբ», - ասաց «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրեն Իրինա Սեյլանյանը:

«Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի գործադիր տնօրեն Արմեն Հակոբյանն իր կողմից շնորհակալություն հայտնեց «Էյչ-Էս-Բի-Սի» Խմբին արդյունավետ համագործակցության և ծրագրի իրականացումը հիմնադրամին վստահելու համար: Վերջինս ընդգծեց, որ ծրագիրը ՀՀ մարզերի բնակիչների համար ստեղծելու է ՏՏ ոլորտում բարձր վարձատրվող աշխատանք գտնելու բացառիկ հնարավորություն, ինչպես նաև տրամադրելու է ձեռնարկատիրությամբ զբաղվելու համար աջակցության զանազան գործիքներ, ինչը կօգնի երիտասարդներին կյանքի կոչել իրենց բիզնես նախագծերը:

HSBC Խումբ

HSBC Holdings plc-ը՝ HSBC Խմբի ընկերության գլխամասը, գտնվում է Լոնդոնում: Խումբը ծառայություններ է տրամադրում 65 երկրներում և տարածաշրջաններում՝ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային և Լատինական Ամերիկայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր և հզոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2020թ. մարտի 31-ի դրությամբ կազմել են 2,918 միլիարդ ԱՄՆ դոլար:

HSBC Հայաստան

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ը հիմնադրվել է 1996թ-ին: Բանկը համատեղ ձեռնարկություն է, որի 70%-ը պատկանում է HSBC Խմբին, իսկ 30%-ը՝ արտերկրի հայ գործարարի: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30 000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 8 գրասենյակների և մոտ 362 աշխատակիցների միջոցով: 2020թ.-ի մարտի 31-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 298 միլիարդ ՀՀ դրամ ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Փի-Էլ-Սի Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկեր:

«Ջինիշյան» հիշատակի հիմնադրամը, իր գործունեությունը սկսելով դեռ 1990-ականներից, օժանդակում է Հայաստանում սոցիալական և տնտեսական խնդիրների լուծմանը՝ ոգեշնչելով մարդկանց օգտագործել իրենց իսկ ներուժը: Հիմնադրամը գործունեություն է ծավալում Հայաստանում, Արցախում և Վրաստանում՝ կրթության, առողջապահության, գյուղատնտեսության, քաղաքացիական հասարակության, տնտեսական և համայնքային զարգացման բնագավառներում: Հիմնադրամի գործունեության վերաբերյալ մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել <https://www.jinishian.org> :